



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՔԱՎԱՆԻ ՄԻՋՃԱՄԲԱՐԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՄՌԱՆ ԱՄԻՄՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 6-ի N 712-Ա որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում կայացած խորհրդակցության 2019 թվականի մայիսի 30-ի N 30/05 արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. 2019 թվականի ամռան ամիսներին առողջարարական ճամբարներում հանգստացող երեխաների շուրջօրյա անխափան և որակյալ բժշկական օգնություն ու սպասարկում կազմակերպելու նպատակով հանձնարարել՝

1) «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղի տարածքում գտնվող *Հանքավանի միջճամբարային մեկուսարանի* շուրջօրյա աշխատանքները իրականացնելու նպատակով ժամանակավորապես տրամադրել *ԳԱԶԵԼ 847 SU 42* հաշվառման համարանիշի ավտոմեքենան՝ հատկացնելով նաև անհրաժեշտ քանակի վառելիք,

2) «Ռուբիկ Հարությունյանի անվան Արուլյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ 2019 թվականի հունիսի 19-ից հուլիսի 8-ը ներառյալ, «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ 2019 թվականի հուլիսի 8-ից հուլիսի 27-ը ներառյալ և «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ 2019 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 15-ը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Արտավազ գյուղի տարածքում գտնվող *Հանքավանի միջճամբարային մեկուսարանում* աշխատելու նպատակով գործուղել ընկերությունների համապատասխան աշխատողներին՝ մեկ բժիշկ (*մանկաբույժ կամ ընդհանրական բժիշկ*) և մեկ բուժքույր, գործուղման ծախսերը վճարել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան՝ ապահովելով մեկուսարանը նաև առաջնային բժշկական օգնության անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով:

2. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

2019 թվականի հունիսի 07
ք. Հրազդան
N 118-Ա



Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ